ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ՓՄՁ և միկրոձեռնարկությունների (MSME) աջակցության ծրագիր



Իրականացման ժամանակահատված: 02.09.2024 - 01.09.2028

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Վրաստան

ԵՄ ներդրում: € 11 400 000

Ընդհանուր բյուջե: € 11 400 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EIB

Նախագծի նկարագրություն

Ծրագրի նպատակն է ներդրումային դրամաշնորհների միջոցով մասնակիորեն ծածկել արժութային ռիսկերի ապահովագրման ծախսերը, որպեսզի Բանկը կարողանա Հարավային Կովկասի տարածաշրջանում ֆինանսական միջնորդներին տրամադրել մատչելի սինթետիկ տեղական արժույթով վարկեր: Սա հնարավորություն կտա ֆինանսական հաստատություններին իրենց հերթին տեղական արժույթով վարկեր տրամադրել միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին (MSME) և պաշտպանել դրանք արտարժույթի տատանումներից առաջացող ռիսկերից:
Ծրագրին կուղեկցի նաև տեխնիկական աջակցություն (TA), որը կօգնի ֆինանսական միջնորդներին ընդլայնել ներառական և կանաչ ֆինանսավորման հասանելիությունը:

Ակնկալվող արդյունքներ:

1. Անուղղակիորեն նպաստել զբաղվածության աճին:
2. Ընդլայնել ֆինանսավորման հասանելիությունը:
3. Խթանել արտադրողական ներդրումները տնտեսության մեջ:
4. Ամրապնդել ոլորտային կառույցների և պետական ու մասնավոր կազմակերպությունների կարողությունները, որպեսզի նրանք կարողանան նախաձեռնել, իրականացնել և կառավարել ներդրումային միջավայրի բարելավման և ազդեցություն ունեցող ներդրումային ծրագրեր: